ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/22

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից 12.02.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/22 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 12.02.2018թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով սույն թվականի հունվարի 23-ին հայտ է ներկայացրել Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ բացման նիստի արձանագրության 2.3 կետով կայացված որոշմամբ մերժել է Ընկերության ներկայացրած հայտը, այն պատճառաբանությամբ, որ Ընկերության կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ վերը նշված անհամապատասխանությունը կայանում է նրանում, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված հավելված 10-ին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրի մեջ վճարողի բանկի հաշվեհամարում առկա է ավել աննշան գծիկ, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի 1-ին չափաբաժնի մասով, ևս դիտվել է անհամապատասխանություն, այն է՝ ԱԱՀ-ի բաղադրիչում տեղի է ունեցել թվերի սխալ տեղաբաշխում՝ 168 000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 160 800 ՀՀ դրամ:

Սակայն Ընկերության ներկայացրած գնային առաջարկում Ընդհանուր գինը և Արժեքը ներկայացված են ճիշտ, իսկ տարբերությունը՝ 20%, ինպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության ԱԱՀ-ի մասին օրենքում:

Ընկերությունը հայտնել է, որ 2-րդ տեղ զբաղեցնող Ընկերության ներկայացրած գնային առաջարկի համեմատ Ընկերությունը ունի 1 529 372 ՀՀ դրամ առավելություն (տնտեսում), իսկ Պատվիրատուի նախահաշվային գնի հետ՝ 4 505 100 ՀՀ դրամի առավելություն (տնտեսում):

Ընկերությունը նման որոշման հետ համաձայն չէ և գտնում է, որ խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-15-րդ հոդվածներով սահմանված Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի իրավունքները:

Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/14» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու Ընթացակարգով կայացրած որոշումը:

Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.02.2018թ. թիվ ԴՎԱ/592 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Երևանի ոսկերչական գործարան

«Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը մերժվել է, քանի որ տուժանքի վճարման անդորրագիրը հայտատուի կողմից լրացված է եղել ոչ պատշաճ ձևով, այն է՝ բանկային հաշվեհամարում առկա է եղել ավելորդ նիշ:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տարբերանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն:

2. Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) (840 000 ՀՀ դրամ) և ԱԱՀ (160 800 ՀՀ դրամ) բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 008 000 ՀՀ դրամ:

3. Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որի 5-րդ տողում՝ որպես վճարողի հաշվեհամար Ընկերության կողմից նշվել է՝ «15100-01906200100»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ Երևանի ոսկերչական գործարան

«Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի հավելված 10-ի վճարման պահանջագրում Ընկերության բանկային հաշվեհամարում առկա է ավել գծիկ:

5. Նույն արձանագրության 3.2 ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/ համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ՝ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի, որի ներկայացրած գնային առաջարկում 1-ին չափաբաժնի համար ներկայացված արժեքի և ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում ընդհանուր գումարին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի 12.02.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.02.2018թ. թիվ ԴՎԱ/592 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: ***Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: ***Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:***

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով***:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ

գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հրավերի նույն կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:*** Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տարբերանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման

վճարման պահանջագիրը, որի 5-րդ տողում՝ որպես վճարողի հաշվեհամար Ընկերության կողմից նշվել է՝ «***15100-01906200100***»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի հավելված 10-ի վճարման պահանջագրում Ընկերության բանկային հաշվեհամարում առկա է ավել գծիկ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 5-րդ կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի հաշվի համարը» պարտադիր դաշտը պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից Խորհրդին է ներկայացվել «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից 21.02.2018թ. Ընկերությանը տրված թիվ 14/1082 տեղեկանքը, առ այն, որ պահանջագրում նշված «***15100-01906200100» ՀՀ դրամային հաշվի վրիպակը՝ ավել նիշ, գծիկ (-), խոչընդոտ չի հանդիսանա վճարման համար:***

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրած մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի 4-րդ տողում վճարողի բանկը նշել է «Արարատբանկ» ԲԲԸ:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ նման հանգամանքներում Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ վերը նշված հիմքով ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.2 ենթակետով արձանագրված անհամապատասխանությանը, այն է՝ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում 1-ին չափաբաժնի համար ներկայացված արժեքի

և ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում ընդհանուր գումարին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝

Չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը	Արժեքը /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ տառերով և թվերով	ԱԱՀ / տառերով և թվերով	Ընդհանուր գինը /տառերով և թվերով /
1.	Աստղեր ոսկեգույն 13մմ	840 000/ ութ հարյուր քառասուն հազար	160 800/ մեկ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր	1 008 000/ մեկ միլիոն ութ հազար

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Միևնույն ժամանակ նույն կետի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առանձին տողով ԱԱՀ-ի գումարը նշվել է 160 800 ՀՀ դրամ, մինչդեռ պետք է նշվեր 168 000 ՀՀ դրամ, սակայն հաշվի առնելով, որ Ընկերության կողմից ճիշտ է նշվել Արժեքը /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ 840 000 ՀՀ դրամ և Ընդհանուր գինը փաստացի 1 008 000 ՀՀ դրամ հաշվարկվել 168 000 ՀՀ դրամով (20%), այսինքն ճիշտ է նշվել նաև ընդհանուր գինը, ուստի Խորհուրդը գտնում է, որ ԱԱՀ-ի տողում Ընկերության կողմից թույլ տրված վրիպակը, այն է՝ 168 000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 160 800 ՀՀ դրամ, չի կարող դիտարկվել որպես էական հանգամանք, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ-ի հարկի գումարի հաշվարկման, այն է՝ <u>ինքնարժեքով</u>, իսկ Կարգի*** 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող <u>ընդհանուր գնով</u>***:

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի մեջ ԱԱՀ-ի գումարի վրիպակը չի հանգեցնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սկզբունքների խախտման և անհավասար պայմաններ չի ստեղծում այլ մասնակիցների համար:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ սույն մասով ևս Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Երևանի ոսկերչական գործարան «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ